ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/32

ք. Երևան « 17 » « 05 » 2021թ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը՝ ի դեմս ռեկտոր Ե. Վարդանյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 12780000 (Տասներկու միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

ինք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	Ք. Երևան, Տերյան 105
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01506385
Հ/Հ 900011037208	Բանկ՝ <<Արարատբանկ>> ԲԲԸ
ՀՎՀՀ 02698732	Հ/Հ15100-01964940200
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Ռեկտոր՝
----------Վ.Գասպարյան	----------Ե.Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 17 » 05 2021թ կնքված
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/32 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության								
հերթական	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գինը /հազ.դրամ/	Մատուցման	
							հասցեն	ժամկետը
1	71241200-8	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի **5-րդ դարի Ծիրանավոր եկեղեցու** նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման նախագծային փաստաթղթերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների մատուցում՝ ըստ Աղյուսակ N 1-ի (Վավերագրում և ուսումնասիրում կատարելու համար ներկայացվող պահանջներ) և Աղյուսակ N 2-ի (Նախագծի պատրաստում, ծախսերի գնահատում կատարելու համար ներկայացվող պահանջներ): Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝ ա) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ) ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային	դրամ	1	12780000	ՀՀ Արագածոտնի մարզ,Փարպի համայնք	2021 թվականի հոկտեմբերի 1-ը ներառյալ

			ժամանակացույցը, դ) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում են հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով: **Մշակված նախագծային փաստաթղթերը պարտադիր են լրամշակման՝ ըստ դրանց փորձաքննության եզրակացությունների**						

ԱՂՅՈՒՍԱԿ N 1՝ Վավերագրում և ուսումնասիրում կատարելու համար ներկայացվող պահանջներ

Նախատեսվող աշխատանքի անվանումը	**Ծառայության համառոտ նկարագրությունը**	**Որակական**	**Համաձայնեցում**	**Փաստաթղթերի մակնիշը**	**Այլ**
Մատենագրական, արխիվային և գիտահետազոտականաղբյուրներիցնյութերիհավաքագրում	Ծանոթանալ նախկին ուսումնասիրությունների,նախագծային փաստաթղթերի հետ	Տեղագրական, պատմական, ճարտարապետական (խնդիրների լուսաբանմանը նպաստող), ուսումնասիրությունների և տեղեկությունների բացատրական նշումներ	Չի պահանջվում	Հատոր1, Գիրք1՝ **Ելեկտրային նյութեր**	Արդյունքները ներկայացնել էլեկտրոնային 1 և թղթային 2 տարբերակով
Վավերագրում	Համալիրի կառույցների և հուշարձանապատկան բեկորների ճարտարապետական չափագրություն, լուսանկարահանում, ծեփապանճենում, առկա քայքայումների, վնասվածքների և շերտագրության տեղադրում չափագրության վրա	Ընթեռնելի մասշտաբով, բոլոր չափերի և պայմանական նշանների տեղադրմամբ (գլխավոր հատակագիծ, կառույցների հատակագծեր, ճակատներ, կտրվածքներ, մանրամասեր)			
Տեղագրական հանույթ	Համալիրի, հուշարձանապատկան տարածքի և մոտեցման ճանապարհների տեղադրմամբ	Ըստ օրենսդրական և նորմատիվ պահանջների՝ հորիզոնական 0,25 մ նիշերով, Մ 1:200			
Հնագիտական հետախուզում և պեղում	Կառույցների պարագծով մոտ 3 մետր լայնությամբ և միջոցառման տարածքների	Ըստ օրենսդրական և նորմատիվ պահանջների՝ հաշվետվություն			
Տեխնիկական վիճակի ակտ	Ակնադիտական հետազոտություն	Համաձայն ձևաթղթի			
Նախագծային առաջադրանք	Տեխնիկական վիճակի ակտի հիման վրա	Համաձայն ձևաթղթի	Համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ		

ԱՂՅՈՒՍԱԿ 2՝ Նախագծի պատրաստում, ծախսերի գնահատում կատարելու համար ներկայացվող պահանջներ

Էսքիզային նախագիծ	Համալիր հետազոտությունների արդյունքների եզրակացություններ, դրանց հիման վրա ամրակայման հնարավոր տարբեր մեթոդների վերլուծությամբ՝ խնդիրների լուծումների գիտական հիմնավորումներ /այդ թվում՝ լուծումների տնտեսական արդյունավետության/	գծագրականմասը՝ ընթեռնելի մասշտաբով, հիմնական չափերի տեղադրմամբ, հիմնավորումների հստակ ներկայացում	Համաձայնեց նելպետական լիազոր մարմնի հետ (այդ թվում՝ գիտամեթոդական խորհրդի քննարկում)	հատոր1, Գիրք2՝ **էսքիզայիննախագիծ**	ներկայացնել ալբոմ՝ 2 օրինակ, էլեկտրոնային կրիչ և ցուցադրական նյութ (պաստառ)
Իրականացման աշխատանքների կազմակերպման հիմնադրույթներ	Նախատեսել ծավալների իրականացման, կազմակերպման դրույթները և հերթականությունն ըստ ամիսների	Ըս տնորմատիվ պահանջների .			
Ճարտարապետական մաս /համաձայն հաստատված էսքիզի/	Աշխատանքային գծագրերի մշակում, ճարտարապետական, ինժեներական, գլխավոր հատակագիծ՝ ուղղաձիգ հատակագծմամբ	Ըստ նորմատիվ պահանջների՝գծագրական մասը ընթեռնելի մասշտաբով, չափերի տեղադրմամբ, բացատրագիր (յուրաքանչյուր միջամտության ձևի վերաբերյալ),		հատոր1, Գիրք3՝ **Աշխատանքային գծագրեր**	ներկայացնել ալբոմ՝ 4 օրինակ, էլեկտրոնային կրիչ՝ 1 օրինակ,թողարկված, հայերենևռուսերենլեզուներով
Կոնստրուկտորական մաս /համաձայն հաստատված էսքիզի՝ըստ անհրաժեշտության/					
Նախահաշվային մաս	Ծախսերի գնահատում ՀՀ դրամով	կազմել MicrosoftExcel ծրագրով, բանաձևերի կիրառմամբ, GHEAGrapalat տառատեսակով ըստ նորմատիվ պահանջների	Չի պահանջվում	հատոր1, Գիրք4՝ **նախահաշվային մաս**	

Առդիր նյութեր և տվյալներ

Անվանումը	Էջերի քանակը	Ծանոթություն
Վկայագիր /паспорт/, պահպանական գոտի		ծանոթանալ՝ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ վարչություն
Ակտի ձևանմուշ	2	ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ վարչություն
Առաջադրանքի ձևանմուշ	3	ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ ՊՄՀՊ վարչություն
Արխիվային չափագրությունների տվյալներ	ցանկ	ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ -ում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____Վ.Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____Ե.Կարոանյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
« 17 » 05 2021թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200-8	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում					2556000	2556000	8946000	8946000	8946000	12780000	12780000	12780000	12780000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ե.Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բուզանդի փ 87շ 85
Հեռախոս՝
Ֆաքս՝
Էլ. փոստ՝csd@araratbank.am

Տպված է՝12/05/2021 15:28 (UTC+04:00)

Բյուջետային փոխանցում N 0933

Ամսաթիվ	**10/05/2021**	Նույնացուցիչ	**3e32074b-d913-42b9-9e31-e13b410a6b9b**
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1510001964940200	**900008000664**	**AMD**	**1,278,000.00**
Վճարողի անվանում	**«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅ**		
Վճարողի բանկ	**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**		
ՀՎՀՀ	**01506385**		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	**23**		
Շահառուի անվանում	**Կենտրոնական գանձապետարան**		
Գումարը բառերով	**Մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունութ հազար դրամ**		
Նպատակ	**Պայմանագրի կատարման ապահովում, ծածկագիր ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/32**		

Ստորագրող	Քրիստինե Հարությունյան
Ստորագրության կարգ	I, II
Ամսաթիվ	10/05/2021 17:28:00.000
Սարքի անվանում	DIGIPASS GO ընտանիքի սարք
Սարքի սերիալ N	3592674239
Ստորագրություն	123406

Կատարված է բանկի կողմից

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բուզանդի փ 87շ 85
Հեռախոս՝
Ֆաքս՝
Էլ. փոստ՝csd@araratbank.am

Տպված է՝12/05/2021 15:28 (UTC+04:00)

Բյուջետային փոխանցում N 0934

Ամսաթիվ	**10/05/2021**	Նույնացուցիչ	**1e300e87-b7d1-4981-af7c-8e3b9ff030b4**
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1510001964940200	**900008000698**	**AMD**	**1,917,000.00**
Վճարողի անվանում	**«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅ**		
Վճարողի բանկ	**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**		
ՀՎՀՀ	**01506385**		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	**23**		
Շահառուի անվանում	**Կենտրոնական գանձապետարան**		
Գումարը բառերով	**Մեկ միլիոն ինը հարյուր տասնյոթ հազար դրամ**		
Նպատակ	**Որակավորման ապահովում, ծածկագիր ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/32**		

Ստորագրող	Քրիստինե Հարությունյան
Ստորագրության կարգ	I, II
Ամսաթիվ	10/05/2021 17:28:00.000
Սարքի անվանում	DIGIPASS GO ընտանիքի սարք
Սարքի սերիալ N	3592674239
Ստորագրություն	123406

Կատարված է բանկի կողմից